ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

Տրանսֆորմացվող սփյուռքների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն

ԱՐԱՔՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն

Սփյուռքների և դրանց համայնքների գնահատման նպատակով առավել հաճախ օգտագործվող մեթոդի՝ համեմատական վերլուծության արդյունավետության ապահովման նպատակով հոդվածում դիտարկվում են այդ վերլուծության մոդելավորման խնդիրները: Դրա բացակայությունը կարող է հանգեցնել նման վերլուծության ոչ ճիշտ արդյունքների և եզրակացությունների: Իսկ դրանց հետևանքով սփյուռքների զարգացման ռազմավարությունը կարող է ունենալ անցանկալի դրսևորումներ: Ընդ որում, խնդիրը վերաբերում է ոչ միայն սփյուռքներին, այլև դրանց բաղկացուցիչ համայնքներին, քանի որ, ինչպես ցույց է տրվում, թե սփյուռքները, թե համայնքները կարող են լինել տարաբնույթ և ոչ համեմատելի: Հոդվածում առաջարկվում է սփյուռքների և դրանց համայնքների ուսումնասիրության մեթոդաբանություն և դրա իրագործման ալգորիթմ: Ցույց է տրվում, որ սփյուռքների կամ դրանց մաս կազմող համայնքների համեմատական վերլուծության նպատակով նպատակահարմար է նախ պարզել սփյուռքների և համայնքների բնույթները: Դա կարելի է անել սփյուռքների դասակարգման կոհենյան մոդելի հիման վրա կամ, եթե դիտարկվում են հետխորհրդային տարածքի սփյուռքներն ու համայնքները, դրա լրամշակված տարբերակի հիման վրա: Առաջարկվող մեթոդաբանության իրականացման նպատակով հոդվածում սփյուռքների բնորոշման փոփոխականները բաժանվել են երկու խմբի՝ ինքնության փոփոխականներ և ինստիտուցիոնալ փոփոխականներ: Սփյուռքների կամ համայնքների բնույթի ավելի մանրամասն գնահատման անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել ինքնության փոփոխականները: Տարբեր բնույթներ ունեցող միավորների համեմատական վերլուծությունը կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների ու առաջարկությունների: Նույն բնույթն ունեցող

սփյուռքների կամ համայնքների համեմատական վերլուծությունը պետք է իրականացվի ինստիտուցիոնալ փոփոխականների հիման վրա: Առաջարկվող մեթոդաբանության փորձարկման նպատակով դիտարկվում են հայկական սփյուռքի երկու՝ Ռուսաստանի և Լիբանանի համայնքների դեպքերը: Ցույց է տրվում, որ այդ համայնքները տարբեր բնույթներ ունեն և այդ պատճառով դրանց համեմատական վերլուծությունը՝ ինքնության պահպանման և ինստիտուտների գործունեության արդյունավետության նախադրյալների բացահայտման նպատակով, չի կարող օգտակար լինել:

Բանալի բառեր
Սփյուռքներ, համայնքներ, համեմատական վերլուծություն, սփյուռքի բնույթ, ինքնության փոփոխականներ, ինստիտուցիոնալ փոփոխականներ

Նախաբան

21-րդ դարում արագորեն աճում է ոչ միայն իրենց հայրենիքից դուրս ապրող մարդկանց թիվն[1], այլև ավելի ու ավելի է մեծանում այն երկրների թիվը, որոնք ձգտում են մշակել իրենց սփյուռքների հետ հարաբերությունների ստեղծմանը, կառավարմանն ու ակտիվացմանն ուղղված հստակ ու շարունակական ռազմավարություն[2]: Մինչև 2014թ. այդ նպատակով արդեն համապատասխան կառույցներ էր ստեղծել ՄԱԿ-ի անդամ երկրների 60 տոկոսը:[3] Ընդ որում, այդ երկրների կոնկրետ նպատակները հաճախ տարբեր են՝ մեկը ցանկանում է պաշտպանել պետության գոյության իրավունքը (Իսրայել), մյուսը՝ հաղթահարել աշխարհագրական կտրվածությունը համաշխարհային տնտեսությունից (Նոր Զելանդիա), երրորդը՝ հաղթահարել խիստ ցածր ծնելիության մարտահրավերները (Շոտլանդիա), չորրորդը՝

[1]International Migration Report 2015. Department of Economic and Social Affairs. United Nations. New York, 2016, p. 4, www.on.org/en/development/desa/population/migration/publications/migrationreport/docs/MigrationReport2015.Highlights.pdf

[2] **Boyle M., Kitchin R. and Ancien D**., Ireland's diaspora strategy: diaspora for development? Gilmartin M. and White A. (eds) *Migrations: Ireland in a Global World.* Manchester University Press, Manchester, 2013, pp. 80-97.

[3] **Alan Gamlen, Michael E. Cummings and Paul M. Vaaler,** Explaining the rise of diaspora institutions, *Journal of Ethnic and Migration Studies,* 2017, Published online: 28 Dec. 2017, doi.org/10.1080/1369183X.2017.1409163

սփյուռքը դիտարկում է որպես հետորհիրդային ազգային ինքնության և հետագծի կառուցման ռեսուրս (Հայաստան), հինգերորդը՝ նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում համաշխարհային տնտեսությանն արդյունավետ ինտեգրվելու կարևոր մեխանիզմ (Հնդկաստան և Չինաստան), վեցերորդը՝ սփյուռքից ստացվող դրամական փոխանցումները համարում է կարևոր մեխանիզմ երկրից բնակչության հեռանալու հետևանքները դիմակայելու համար (Մեքսիկա) և այլն:[4] Սփյուռքի հետ համագործակցության ռազմավարական նպատակների, մոտիվների, ինստիտուտների, ռազմավարությունների աճող բազմազանության ու ազգային առանձնահատկությունների ազդեցությամբ արագորեն զարգանում են «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերությունների ձևերը, ինստիտուցիոնալ կարողությունները, բարդանում են կապերը: Առկա խնդիրների բացահայտման և դրանց համար արդյունավետ լուծումներ ապահովելու նպատակով շարունակաբար ավելանում է սփյուռքների ուսումնասիրությանը նվիրված տեսական և էմպիրիկ հետազոտությունների թիվը, որոնք վերաբերում են ինչպես ընդհանուր, տեսական խնդիրներին (սփյուռքների սահմանում, դասակարգում և այլն)[5], այնպես էլ առանձին ուղղությունների՝ «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերություններ, ինքնության պահպանման և ինտեգրման դիլեմա, սփյուռքյան ինստիտուտներ, միջազգային հարաբերություններում և հայրենիքի ու ընդունող երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունների վրա սփյուռքի ազդեցություն և այլն[6]: Այդուհանդերձ, դեռ վաղ է արձանագրել, որ այդ հետազո-

---

[4] **Boyle Mark, Kitchin Rob and Ancien Delphine**, նշվ. աշխ..

[5] **Brazil J. and A. Mannur**, *Theorizing Diaspora: A Reader.* Oxford: Blackwell; **Cohen R.,** *Global diasporas.* Second edition. Routledge; **Dufoix S.**, *Diasporas.* Berkeley: University of California Press; Esman, M. 2009. *Diasporas in the Contemporary World.* Cambridge: Polity Press; **Kokot A. and Kh. Tölölyan**, eds. 2004. *Diaspora, Identity and Religion, New Directions in Theory and Research*. New York: Routledge; **Laguerre M. S.,** *Diaspora, Politics, and Globalization.* New York: Palgrave Macmillan, 2006; **Sheffer G.,** *Diaspora Politics: At Home Abroad.* Cambridge: Cambridge University Press. 2003.

[6]**Burla Sh.,** The Diaspora and the homeland: political goals in the construction of Israeli narratives to the Diaspora, *Israel Affairs*, 2015, **21**, 4, 602-619; **Shain Y., and A. Barth,** Diasporas and International Relations Theory, *International*

տությունների նպատակով կիրառվող մեթոդները, դրանց առանձնահատկություններն ու մեխանիզմներն ավարտուն տեսք են ստացել: Մասնավորապես, խոսքը վերաբերում է սփյուռքների ուսումնասիրության ժամանակ համեմատական վերլուծության մեթոդի կիրառմանը: Թեև այն սփյուռքների ուսումնասիրության ժամանակ առավել հաճախ կիրավող մեթոդներից է, սակայն դեռևս կարիք կա հիմնավորելու, թե ինչ չափանիշներով պետք է ընտրվեն համեմատվող սփյուռքները (կամ համայնքները), տվյալ հետազոտական խնդրի լուծման լիարժեք հավաստիությունն ապահովելու համար ո՞ր փոփոխականների համախումբը պետք է օգտագործել և այլն: Այս հոդվածում, որպես ներդրում սփյուռքների գիտական ուսումնասիրության մեջ, առաջարկվում է սփյուռքի ուսումնասիրության նպատակով օգտագործվող համեմատական վերլուծության մեթոդի կոնցեպտուալացման նպատակ ունեցող մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա արդյունավետորեն խուսափել սփյուռքների (ինչպես տարբեր սփյուռքների, այնպես էլ նույն էթնոսի սփյուռքի տարբեր համայնքների) համեմատական վերլուծության ժամանակ ծագող մարտահրավերներից ու ոչ ճիշտ եզրակացություններից: Առաջարկվում է այդ ուսումնասիրությունների ժամանակ կիրառվող փոփոխականները դասակարգել երկու խմբի՝ ինքնության և ինստիտուցիոնալ, և, ըստ այդմ, ուսումնասիրությունն իրականացնել երկու փուլով: Առաջարկվող մեթոդաբանության արդյունավետությունը ցույց է տրվում հայկական սփյուռքի օրինակով:

Հետազոտության կառուցվածքը և մեթոդաբանությունը

Քաղաքական համակարգերի, ինստիտուտների ու գործընթացների, մասնավորապես, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» փոխազդեցությունների, դրանց ինստիտուտների տարաբնույթ զարգացումները

Organization, 2003, 57, 449-479; **Shain, Y.,** *Kinship and Diasporas in International Affairs.* University of Michigan Press, Ann Arbor; **Sheffer G.,** Integration impacts on Diaspora-homeland relations, *Diaspora Studies*, 2013, **6**, 1, 13-30; **Ter-Matevosyan, V., et al.,** Institutions and Identity politics in the Armenian diaspora: the cases of Russia and Lebanon, *Diaspora Studies,* 2017, **10**, 1, 64-80.

շատ հաճախ հնարավոր չէ բացատրել առկա տեսական մոդելներով ու սխեմաներով: Այդ պատճառով համեմատական վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես այդ զարգացումների կանխատեսման, խթանման կամ կանխարգելման, այնպես էլ դրանց արդյունավետության մեծացման տեսակետից: Միաժամանակ, այն հնարավորություն է ստեղծում այդ գործընթացներում ներգրավված հասարակական միավորների՝ ժողովուրդների, հասարակությունների, համայնքների, ինչպես նաև մշակույթների նմանությունների ու առանձնահատկությունների բացահայտման և հիմնավորման համար:[7] Ըստ Դ. Ապտերի[8], համեմատությունն իրադարձությունների և երևույթների հիման վրա գաղափարների կապը բացահայտելու յուրահատուկ ձև է, որը բխում է քաղաքական փիլիսոփայությունից կամ տեսությունից: Համեմատական մեթոդի կիրառման հիմնական նպատակն է ցույց տալ, թե երկու և ավելի դեպքեր կամ գործընթացներ ինչ հատկանիշներով են միմյանցից տարբեր կամ միմյանց նման, ինչպես նաև էմպիրիկ տվյալների վերլուծության հիման վրա ստանալ ընդհանրացումներ՝ օրինաչափությունների, մոդելների, դասակարգումների կամ այլ տեսքով:[9] Սփյուռքների ուսումնասիրության դեպքում համեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ հաճախ փորձ է արվում լուծել հետևյալ հիմնախնդիրը. ինչո՞ւ որոշ դեպքերում «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» փոխազդեցությունները, սփյուռքի ինստիտուցիոնալացումը կամ հայրենիքում սփյուռքի վերաբերյալ քաղաքականության մշակման ու իրականացման կառույցների գործունեությունն ակնհայտորեն շատ ավելի արդյունավետ է, քան դրանց բավական նման այլ դեպքերում:

Համեմատական մեթոդի կիրառման արդյունավետությունը պայմանավորված է երկու գործոններով՝ համեմատվող դեպքերի և

[7] **Smelser N.,** On Comparative Analysis, Interdiscisciplinary and Internationalization in Sociology, XV International Congress, 2002.

[8] **Apter D.,** Comparative Politics, Old and New, A new Handbook of Political Science, New York, Oxford University Press, 1996, p. 372.

[9] **Torosyan T., Petrosyan M.,** Comparative Analysis of Conflicts: Modeling Problems, *Armenian Journal of Political Science,* 2015, 2, 121-138.

փոփոխականների համախմբի ընտրություններով:[10] Ըստ այդմ, անհրաժեշտ է լուծել երկու խնդիր՝ ընտրել ուսումնասիրության նպատակին ճշտորեն համապատասխանող համեմատվող դեպքեր և խնդրի լուծման համար անհրաժեշտ և բավարար փոփոխականներ: Հետևաբար, սփյուռքների համեմատական վերլուծությունը պետք է բաղկացած լինի երկու փուլից, որոնցից առաջինում պետք է ընտրվեն համեմատվող դեպքերը, ապա պետք է համեմատվեն դրանց ինստիտուցիոնալ փոփոխականները՝ սփյուռքների կառույցների ու դրանց գործունեությունների տարբերությունները և դրանց պատճառները բացահայտելու համար:

Սփյուռքի գլխավոր տարբերակիչ հատկանիշը՝ ընդունող երկրի մնացած բնակչության համեմատ, պայմանավորված է նրա հավաքական ինքնությամբ: Զ. Լևինը կարևորում է սփյուռքի ինչպես ներքին կազմակերպվածությունն, այնպես էլ սոցիալ-մշակութային համատեքստը և սփյուռքը համարում է իր ծագման երկրի սահմաններից դուրս ապրող էթնիկ հատված, որը գոյություն կունենա իր էթնոմշակութային յուրահատկության պահպանմանը զուգընթաց:[11] Այսինքն, ինքնությունը սփյուռքի էությունն է և այն կորցնելիս սփյուռքը կդադարի գոյություն ունենալ: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինքնություն քարացած չէ և ենթակա է շարունակական փոփոխությունների՝ տարբեր գործոնների ազդեցությամբ:[12] Հետևաբար, այն փոփոխականները, որոնք օգտագործվում են սփյուռքների ուսումնասիրության ժամանակ, կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ինքնության և ինստիտուցիոնալ: Առաջին՝ ինքնության խմբի փոփոխականներն անմիջականորեն են ազդում ինքնության ձևավորման, պահպանման կամ փոփոխությունների վրա: Երկրորդ՝ ինստիտուցիոնալ խմբի փոփոխականներն, իհարկե, ինքնության վրա նույնպես ազդեցություն ունեն, սակայն այդ ազդեցությունն անուղղակի

---

[10] **Lijphart A.,** Comparative Politics and Comparative Method, The American Political Science Review, 1971, 65, 3, 682-693.

[11] **Левин З. И.,** Менталитет диаспоры (системный и социокультурный анализ). М., Издательство "Крафт+", 2001, с. 5.

[12] **Թորոսյան Տ.,** Ինքնության պահպանման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2006թ., 1, 3-21:

է և պայմանավորված է ինստիտուտների արդյունավետությամբ: Այս երկու խմբերը տարբեր դերակատարություն ունեն սփյուռքների ուսումնասիրության ժամանակ: Առաջին խմբի փոփոխականները, ուսումնասիրությունների արդյունավետության ապահովման նպատակով, հիմնականում պետք է օգտագործվեն հետազոտության առաջին փուլում՝ համեմատվող դեպքերի ընտրության ժամանակ: Երկրորդ խմբի փոփոխականներն արդյունավետ է օգտագործել ինստիտուտների գործունեության գնահատման փուլում:

Նկ. 1-ում ներկայացված է վերը բերված տրամաբանությամբ համեմատական վերլուծության մեթոդաբանության իրականացման ալգորիթմը:

Նկ. 1 Սփյուռքների համեմատական վերլուծության մեթոդաբանության ալգորիթմը



Այսպիսով, սփյուռքների ուսումնասիրության դեպքում հավաստի արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է նախ փոփոխականները դասակարգել երկու խմբի՝ ինքնության և ինստիտուցիոնալ, ապա իրականացնել համեմատվող դեպքերի ընտրություն՝ ըստ ինքնության փոփոխականների, ապա՝ ինստիտուցիոնալ փոփոխականների

վերլուծություն, իսկ դրանից հետո՝ արդյունքների հիման վրա ձևակերպել եզրակացությունը:

Սփյուռքների ուսումնասիրության ժամանակ օգտագործվող ինքնության և ինստիտուցիոնալ փոփոխականները

Սփյուռքի ուսումնասիրությանը նվիրված ակադեմիական գրականության մեջ հետազոտական նպատակներով օգտագործվում են բազմաթիվ փոփոխականներ: Առաջին խնդիրը, որի լուծման նպատակով դրանք օգտագործվում էին, սփյուռքի սահմանումն էր՝ այդ համայնքի հատկանիշները ճշտելու և նման այլ խմբերից տարբերելու նպատակով, ապա՝ սփյուռքների դասակարգումը: Նման առաջին աշխատանքներից մեկը Ջ. Արմսթրոնգի՝ մոտ չորս տասնամյակ առաջ հրապարակած հոդվածն էր, որն առաջարկում էր ինչպես սփյուռքների դասակարգման երկդաս մոդել (մոբիլիզացված և պրոլետարական դասեր), այնպես էլ սփյուռքի բնորոշման փոփոխականներ (չափանիշներ)՝

1. Ժողովուրդը սփռված է աշխարհի տարբեր վայրերում և գոյություն ունեն հայրենիք-էթնիկ խումբ-ընդունող երկիր եռակողմ փոխհարաբերություններ,
2. Հայրենիքին մշտապես պատկանելու զգացողությունը, ինչպես նաև էթնիկ խմբի պատմության և ինքնության մասին հավաքական գիտակցությունը սփյուռքը բնորոշող կարևորագույն գործոններից են,
3. Շարունակական բնույթ ունեն հայրենիք վերադառնալու ցանկությունը և վերջինիս իդեալականացումը,
4. Տվյալ էթնիկ միավորի համայնքների ներսում տեղի է ունենում անդրազգայնացման գործընթաց և ցանցային համագործակցություն,
5. Հայրենիք – սփյուռք փոխհարաբերությունների համատեքստում ուժգնանում են կապերն ու համագործակցությունը:[13]

[13] **Armstrong J.,** Mobilized and Proletarian Diasporas, *The American Political Science Review,* 1976, **70**, 2, 394-408.

Ջ. Արմսթրոնգի առաջարկած սփյուռքի երկդաս մոդելն անցած տասնամյակների ընթացքում լրամշակվել է, ինչին անդրադարձ կլինի հոդվածի հաջորդ բաժնում: Ինչ վերաբերում է սփյուռքը բնորոշող փոփոխականներին, ապա դրանք կդիտարկվեն ոչ թե սփյուռքի բնորոշման լիարժեքության, այլ վերը նշված փոփոխականների երկու խմբերին պատկանելու տեսակետից: Դժվար չէ նկատել, որ, 1, 4, 5 փոփոխականները պատկանում են ինստիտուտցիոնալ դասին, իսկ 2 և 3 փոփոխականները՝ ինքնության:

Հետաքրքիր է, որ ավելի ուշ՝ 90-ականների սկզբին, երբ ակադեմիական շրջանակների հետաքրքրությունը սփյուռքների նկատմամբ զգալիորեն մեծացավ, նկատվեց հակում դեպի սփյուռքների ինքնությունը բնորոշող փոփոխականների կարևորում: Մասնավորապես, Ու. Սաֆրանն առանձնացրել է սփյուռքի վեց բնութագրիչներ (փոփոխականներ)՝

1. Տվյալ ժողովուրդը կամ նրանց նախնիները հեռացվել են սկզբնական «կենտրոնից»՝ հայրենիքից, դեպի երկու կամ ավելի «ծայրամասային»՝ օտար շրջաններ:
2. Նրանք պահպանում են հայրենիքի վերաբերյալ հավաքական հիշողությունը՝ հայրենիքի աշխարհագրական տեղակա-յումը, սեփական պատմությունը, հայրենի երկրի ձեռքբերումները և այլն:
3. Նրանք հավատում են, որ երբեք ամբողջությամբ ընդունված չեն լինի ընդունող հասարակության կողմից, ուստի իրենց զգում են կիսով չափ օտար կամ մեկուսացված:
4. Նրանք իրենց նախնիների հայրենիքը համարում են միակ ճշմարիտ տունը՝ այն նպատակակետը, որտեղ պետք է վերադառնան իրենց հետնորդները, երբ պայմաններն առավել բարենպաստ լինեն:
5. Նրանք հավատում են, որ հավաքական կերպով պետք է նվիրված լինեն իրենց հայրենիքի վերականգնմանն ու պահպանմանը, ապահովությանն ու բարգավաճմանը:
6. Նրանք անձնապես կամ միջնորդավորված շարունակում են կապ պահպանել իրենց հայրենիքի հետ, քանի որ նրանց էթնոհամայնքային գիտակցությունն ու համախմբվածու-թյունը

մեծապես բացատրվում է հայրենիք-սփյուռք կապի գոյությամբ։[14]

Ակնհայտ է, որ այս 6 փոփոխականներն էլ պատկանում են ինքնության դասին՝ այն գերադասելով ինստիտուցիոնալ դասից։ Դրա անուղղակի դրսևորումներից էր նաև այն, որ Սաֆրանի մոդելում երեք փոփոխականներ՝ 3, 4 և 5, հաստատագրում էին, որ սփյուռքի կարևոր առաքելություններից է վերադարձը հայրենիք։ Սակայն 90-ականների երկրորդ կեսին արդեն մի խումբ փորձագետներ կրկին օրակարգ վերադարձրեցին սփյուռքի ինքնակազմակերպական կարողությունների դիտարկման անհրաժեշտության արմատրոնգյան թեզը՝ որպես կայացած սփյուռքի երկրորդ կարևոր դրսևորում։ Մասնավորապես՝ Ժ. Տոշչենկոն և Տ. Չապտիկովան համարում են, որ սփյուռքը միևնույն էթնիկ ծագման և իրենց պատմական միջավայրի սահմաններից դուրս՝ այլ էթնիկ միջավայրում, ապրող մարդկանց կայուն ամբողջություն է և *ունի հասարակական որոշակի ինստիտուտներ*, որոնք անհրաժեշտ են տվյալ էթնիկ խմբի զարգացման և գործունեության համար։[15] Դա նշանակում է, որ ինքնության փոփոխականներից զատ կրկին սկսեցին կարևորվել ինստիտուցիոնալ դասի փոփոխականները։ Իսկ Ռ. Կոհենը անհրաժեշտ էր համարում Ու. Սաֆրանի առաջարկած փոփոխականներն ամբողջական դարձնելու նպատակով դրանք լրացնել ևս չորսի ավելացմամբ։ Ըստ այդմ, սփյուռքի սահմանումը պետք է նաև

1. ներառի թե՛ կամավորությամբ, թե՛ ագրեսիայի, հետապնդման կամ ծայրահեղ հալածանքների արդյունքում տարածված էթնիկ խմբեր։
2. հաշվի առնի այն անհրաժեշտ ժամանակային անցումը, որի ընթացքում տվյալ էթնիկ համայնքը վերածվում է սփյուռքի։ Համաձայն Կոհենի՝ անդրազգային համայնքը ամուր կապերով պետք է կապված լինի անցյալի հետ, ինչը այդ համայնքին կպաշտպանի ձուլման վտանգից։
3. ներառի սփյուռքի և վերջինիս շրջանակներում ձևավորված ինքնության առանձնահատկությունները։ Մասնավորապես,

[14] **Safran W.,** Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, *Diaspora*, 1991, 1.

[15] **Тощенко Ж.Т., Чаптыкова Т.П.,** Диаспора как объект социологического исследования, *Социс,* 1996, 12, 33-42.

ազգային, էթնիկ և անդրազգային ինքնությունների միջև եղած տարբերությունների բացահայտումն ու դրանց սինթեզը կարող են հանգեցնել առավել կառուցողական և ստեղծարար զարգացումների: Բնակություն հաստատելով այլ երկրում և ձևավորելով սփյուռք՝ էթնիկ համայնքը կարող է ընդունող երկրում մեծ ձեռքբերումներ ունենալ գիտական, մշակութային, տնտեսական և այլ ոլորտներում:

4. ընդունի, որ սփյուռքը ոչ միայն հավաքական ինքնություն է ձևավորում բնակության տվյալ վայրում, այլև ունի ընդհանուր ինքնություն այլ երկրներում ապրող նույն էթնիկ խմբերի հետ:[16]

Դրանով էապես ընդլայնվում էր սփյուռքների ընդգրկման նախատիպային և դասական ընկալումն ու ավելացվում էին նաև առևտրային և աշխատանքային նպատակների իրացման արդյունքում ստեղծված համայնքները:

Հայրենիք վերադարձի գաղափարին մի խումբ ուսումնասիրողներ կրկին անդրադարձան 2000-ականների առաջին տասնամյակի ընթացքում: Մասնավորապես, Ռ. Բրուբեյքերն առաջարկել է սփյուռքի բնորոշիչ երեք այլ առանցքային չափանիշներ[17], որոնք իմաստաբանական և հայեցակարգային առումներով ամփոփ ներկայացնում են մի շարք հեղինակների[18] առաջարկած բնութագրիչները՝

1. *Սփռվածություն.* այս չափանիշը լայնորեն ընդունվում և առավել հաճախ ընկալվում է որպես հարկադիր տեղահանության արդյունքում առաջացած իրավճակ,
2. *Հայրենիքի հանդեպ նվիրվածություն.* ենթադրում է, որ ցանկացած սփյուռքաբնակ ունի հայրենադարձման ներքին մղում, նպատակ ունի բարեկարգելու սեփական հայրենիքը և

[16] **Cohen R.,** Global Diasporas: An introduction. Second edition, Routledge, 2008, pp. 7-8.

[17] **Brubaker R.,** The ‘diaspora’ diaspora, *Ethnic and racial Studies*, 2005, **28**, 1, 1-19.

[18] **Safran W.,** 1991, Ն շ վ . աշ խ., **Clifford J.,** Diasporas, *Cultural Anthropology,* 1994, **9**, 3, 302-338; **Tölölyan Kh.,**The Nation States and Its Others: In Lieu of a Preface. *Diaspora,* 1991, 1, 1; **Cohen R.,** Diasporas and The State: From Victims to Challengers. *International Affairs*, 1996, **72**, 3, 507-520; **Sheffer G**., 2003, Ն շ վ . աշ խ.:

պահպանելու հայրենիք-սփյուռք արդյունավետ հարաբերություններ,

3. *Ինքնության պահպանում.* ենթադրում է ինքնության պահպանման կարևորությունը ընդունող հասարակության մեջ:

Իսկ Կ. Բաթլերը, կարևորելով Ջ. Արմսթրոնգի վերոհիշյալ երեք չափանիշներն, առաջարկում է դրանք լրացնել չորրորդ՝ պատմա-ժամանակագրական գործոնով: Ըստ Բաթլերի՝ էթնոազգային խումբը, որը բավարարում է այդ չափանիշներին, կարող է համարվել սփյուռք միայն այն դեպքում, երբ նվազագույնը երկու սերունդ գոյություն ունենալուց հետո խումբը նպատակաուղղված է հայրենիք վերադառնալուն:[19]

Ջ. Քլիֆորդը քննադատում է Սաֆրանի և այն հետազոտողների առաջարկած մոդելները, որոնք ներառում են հայրենիք վերադարձի գաղափարը, դրանք համարելով այդ գաղափարի վրա «կենտրոնացած» կաղապարներ: Ըստ նրա՝ ապակենտրոն կապերը նույնքան կարևոր են, որքան վերադաձի նպատակի վրա կենտրոնացած կապերը: Նա այս կարծիքը հիմնավորում է այն պնդմամբ, որ սփյուռքի նպատակը կարող է լինել ոչ միայն արմատներին վերադառնալն, այլ նաև տարբեր աշխարհագրական վայրերում մշակույթի վերաստեղծումը: Նմանօրինակ փորձ կարելի է նկատել աֆրիկյան սփյուռքի պարագայում, երբ սփյուռքաբնակների առաջնային նպատակն ամենևին հայրենադարձությունը չէ: Ջ. Քլիֆորդն ընդունում է, որ սփյուռքի դասական տարբերակներ են հրեական, հունական և հայկական սփյուռքները, որոնց դեպքում այս կամ այն շրջանում տեղի է ունեցել հայրենադարձություն: Սակայն նա կարծում է, որ նոր, գլոբալ պայմաններում գոյատևման և հիբրիդացման համատեքստում հրեական, հունական և հայկական դեպքերը կարող են համարվել ոչ նորմատիվային սկզբնակետեր[20]:

Հայրենիք վերադարձի նպատակը պարտադիր չի համարում նաև Գ. Շեֆֆերն՝ առանձնացնելով երեք ընդհանրական փոփոխա-

[19] **Butler K. D.,** նշվ. աշխ.:
[20] **Clifford J., 1994**, նշվ. աշխ.:

կաններ (բնորոշիչներ)[21], որոնք կարող են ընկալվել սփյուռքի սահմանման ներքո։ Դրանք են՝

1. սփյուռքի հավաքական ինքնության պահպանում և զարգացում,
2. հայրենիքի և ընդունող երկրի ինստիտուցիոնալ միավորներից զատ ներքին կազմակերպվածության առկայություն,
3. հայրենքի հետ իրական և նշանակալի հարաբերությունների առկայություն։

Հատկանշական է, որ 2000-ականների սկզբին ձևակերպված այս երեք հատկանիշներից երկուսը (2-րդը և 3-րդը) վերաբերում են ինստիտուցիոնալ դասին և միայն մեկը՝ ինքնության, ինչն ընդգծում է, որ առաջինը ոչ պակաս կարևորություն էր ստանում, քան երկրորդը։

Գ. Շեֆֆերն առաջարկել է ևս մեկ, ավելի մանրամասն մոդել, որի համաձայն էթնոազգային սփյուռքը կամավոր կամ պարտադրված արտագաղթման արդյունքում ստեղծված սոցիալ-քաղաքական կազմավորում է, որի անդամներն ընդունում են, որ իրենք ունեն միևնույն էթնոազգային ծագումը և համարվում են փոքրամասնություններ մեկ կամ մի քանի ընդունող երկրներում։ Նման էթնիկ միավորի անդամները կապ են պահպանում իրենց հայրենքի և այլ երկրներում բնակվող իրենց ազգակիցների հետ։ Միաժամանակ, սփյուռքի ներսում գոյություն ունի ընդունող երկրից չհեռանալու, սակայն ընդհանուր ինքնությունը պահպանելու ձգտում։ Դրանով սփյուռքը ցուցաբերում է համախմբվածություն իր ներսում և ամբողջ ազգի հետ։ Սփյուռքը նաև կազմակերպված և ակտիվ գործունեություն է ծավալում մշակութային, հասարակական, տնտեսական և քաղաքական ոլորտներում։ Տարբեր ոլորտներում սփյուռքը ստեղծում է գործունեության վերպետական ցանցային համակարգ, որն անդրադառնում է հայրենիքի, ընդունող երկրի և այլ երկրներում իրենց ազգակիցների հետ բազմակողմանի փոխհարաբերությունների վրա։[22] Հատկանշական է, որ այս մոտեցումը ներդաշնակորեն համադրում է ինքնության և ինստիտուցիոնալ դասերը։ Թեև Գ. Շեֆֆերի առաջարկած մոդելը բավական համակողմանիորեն նկարագրում է սփյուռքը, այդուհանդերձ, շրջանցում է այն ուսումնասիրությունները,

[21] **Шеффер Г.,** Диаспоры в мировой политике, *Диаспоры,* 2003, 1, 162–184.
[22] **Sheffer G., 2003,** նշվ. աշխ., էջ 10։

որոնց հեղինակները հայրենիք վերադարձի նպատակը համայնքը սփյուռք կոչելու անվերապահ նախապայման էին համարում։ Մինչդեռ, ըստ Գ. Շեֆֆերի, սփյուռքը ընդունող երկրում մշտական բնակություն հաստատելու նպատակ ունի։ Թեև նա կարևորում է հայրենիք-սփյուռք կապերը, այնուամենայնիվ, ժխտում է հայրենիք վերադարձի անվերապահությունը։ Սակայն պետք է նկատել, որ բանավեճը սկզբունքային չէ, քանի որ Գ. Շեֆֆերը չի ժխտում հայրենիք վերադարձի հնարավորությունը։ Ավելին, նրա ձևակերպած «հայրենքի հետ իրական և նշանակալի հարաբերությունների առկայություն» մոտեցումը առանձին դեպքերում կարող է և հանգեցնել անհատական կամ խմբային հայրենադարձության։ Ընդ որում, առանձին ուսումնասիրության առարկա է հայրենադարձության՝ ինքնաբուխ (իրավիճակի փոփոխության հետևանքով՝ ինչպես հայրենիքում, այնպես էլ ընդունող երկրում), թե հայրենիքի կազմակերպած, որպես հայրենիքում առկա խնդիրների լուծման արդյունավետ հնարավորության ուսումնասիրությունը։

Այսպիսով, սփյուռքների ուսումնասիրությունը ծավալվել է չորս հիմնական ուղղություններով՝

1. սփյուռքի սահմանում,
2. սփյուռքների դասակարգում,
3. սփյուռքների համեմատական ուսումնասիրություն,
4. սփյուռքների ծագումն ու զարգացումը բնութագրող փոփոխականների համախմբերի սահմանում՝ վերոհիշյալ խնդիրների լուծման համար։

Այդ ընթացքում մի շարք հեղինակներ առաջարկել են փոփոխականների տարբեր համախմբեր, որոնց տարրերն այս կամ այն չափով կրկնվել են։ Ըստ այս հոդվածում առաջարկվող դասակարգման, բոլոր փոփոխականները պատկանում են կամ ինքնության դասին, կամ՝ ինստիտուցիոնալ։ Ընդ որում, տարբեր ժամանակահատվածներում ուշադրությունն ավելի կենտրոնացած է եղել կամ ինքնության փոփոխականների վրա, կամ՝ ինստիտուցիոնալ՝ առանց փոփոխականների նման դասակարգում անելու։ Վերը բերված վերլուծությունը վկայում է, որ ինքնության փոփոխականները, որպես կանոն, օգտագործվել է սփյուռքների դասակարգման համար, իսկ

ինստիտուցիոնալ փոփոխականները՝ համեմատական վերլուծության: Վերջին տասնամյակի ընթացքում սփյուռքի սահմանման օպտիմալ ձևակերպում գտնելու որոնումներն ու «ինքնությա՞ն, թե՞ ինստիտուցիոնալ փոփոխականներն են կարևոր» բանավեճն իր տեղը զիջել է սփյուռքների ինստիտուտների, դրանց գործունեության արդյունավետության, սփյուռքների զարգացման վրա ինտեգրման գործոնի ազդեցության, ինչպես նաև սփյուռք-հայրենիք, սփյուռք ընդունող երկիր հարաբերությունների արդյունավետության, տարբեր սփյուռքների կամ համայնքների համեմատական վերլուծության վրա:[23]

Այդուհանդերձ, գրեթե բաց է մնացել այն հարցը, թե արդյոք ո՞ր սփյուռքները կամ համայնքներն են «համեմատելի»՝ վերլուծության արդյունքների և եզրակացության բարձր հավաստիության տեսակետից:

Համեմատվող դեպքերի ընտրություն

Դեռևս կես դար առաջ, համեմատական վերլուծության հայեցակարգի ձևավորման շրջանում հայտնի էր, որ ավելի արդյունավետ է երկու և ավելի այնպիսի հասարակությունների կամ քաղաքական գործընթացների համեմատությունը, որոնք ունեն ավելի մեծ թվով ընդհանուր հատկանիշներ, քան համընդհանուր կամ համազգային համեմատությունը:[24]

Համեմատական վերլուծության ժամանակ հետազոտության արդյունքների ճշգրտության ապահովման տեսակետից առանցքային

---

[23] **Sheffer G.,** Homeland and Diaspora: An Analytical Perspective on Israeli–Jewish Diaspora Relations, *Ethnopolitics: Formerly Global Review of Ethnopolitics*, 2010, **9**, 3-4, 379-399; **Sheffer G.**, Integration impacts on Diaspora-homeland relations, *Diaspora Studies,*2013, **6**, 1, 13-30; **Koinova M.**, Diasporas and democratization in the post-communist world, *Communist and Post-Communist Studies,*2009, 42, 41-64; **Burla Sh.**, The Diaspora and the homeland: political goals in the construction of Israeli narratives to the Diaspora, *Israel Affairs,* **21,** 4, 602-619; Boyle M., Kitchin R. and Ancien D., Ireland's diaspora strategy: diaspora for development? **Gilmartin M. and White A.,** (eds) *Migrations: Ireland in a Global World.* Manchester, 2013, University Press, Manchester, pp. 80-97; **Alan Gamlen, Michael E.,** Cummings and Paul M. Vaaler (2017). նշված աշխ.:

[24] **Linz J., Miguel de A.,** Within Nation, Differences and Comparisons, The Eight Spains, Madrid, 1966, pp. 268.

նշանակություն ունի «համեմատելի» դեպքերի ընտրությունը:[25] Այս դեպքում համեմատական վերլուծության առարկա պետք է դառնան այնպիսի երկրներ կամ սփյուռքներ, որոնք հնարավորինս նման են միմյանց ու անհամեմատեղելիության ու անհամարժեքության խնդիրներ չեն առաջացնում: «Համեմատելի» նշանակում է տվյալ սփյուռքի բնույթը կանխորոշող հատկանիշներով կամ ինքնության փոփոխականներով (բնույթով միմյանցից չեն տարբերվում: Որպես նման փոփոխականներ կարելի է դիտարկել տվյալ սփյուռքի ձևավորման նախադրյալը, ազգային ինքնությունը, մարդկանց կենսափորձը, արժեհամակարգը և անձնային ու խմբային հատկանիշներ ձևավորող այլ գործոններ: Նմանատիպ հետազոտության իրականացումը առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում համեմատական մեթոդի արդյունավետ կիրառման համար, քանզի դրանք թույլ են տալիս բացահայտել կապերն ու դրանց օրինաչափությունները մի քանի (ինստիտուցիոնալ) փոփոխականների միջև, մինչդեռ մի շարք այլ (ինքնության) փոփոխականներ որպես հաստատուններ են դիտարկվում:[26] Փոփոխականների առաջին խմբի շարքում կարելի է դիտարկել սփյուռքի խնդիրներով զբաղվող ինստիտուտները սփյուռքում և հայրենիքում, ընդունող երկրում և հայրենիքում գործող վարչակարգերի տեսակները, կրթական հաստատությունները և այլն: Շատ հետազոտողներ համակարծիք են, որ սփյուռքի ցուցանիշը ինստիտուտների և կազմակերպությունների ձևավորումն է, որոնց գործունեությունն ուղղված է էթնիկ և դավանական ինքնության պահպանմանն ու զարգացմանը, արդյունավետ սոցիալիզացիային: Այդուհանդերձ, ինստիտուտների առկայությունն առանց արտասփյուռքյան հաղորդակցման ֆունկցիաների և դրանց իրացման ենթակառուցվածքի, սահմանափակում է սփյուռքի ինքնաբավությունն ու դատապարտում է մեկուսացման:[27]

---

[25] **Torosyan T., Petrosyan M.,** նշված աշխ.:

[26] **Smelser N**., On Comparative Analysis, Interdiscisciplinary and Internationalization in Sociology, XV International Congress, 2002.

[27] **Мыльников М.,** Современные диаспоры в глобальном коммуникационном пространстве. *Вестник московского университета,* серия Социология и политология, 2007, **18**, 2.

Սփյուռքների ուսումնասիրություններին նվիրված ակադեմիական գրականության մեջ օգտագործվող ինքնության փոփոխականների շարքին կարելի է դասել սփյուռքի ձևավորման մոտիվացիան, մարդկանց կենսափորձը, արժեհամակարգը, նրանց անձնային ու խմբակային հատկանիշները ձևավորող այլ գործոններ:

Սփյուռքների ուսումնասիրությունների ակտիվացման սկզբնական շրջանում փորձ էր արվում դրանք դասակարգել ոչ թե ինքնության, այլ ինստիտուցիոնալ փոփոխականների հիման վրա: Մասնավորապես, Ա. Մեդամն առաջարկում էր, հիմք ընդունելով սփյուռքների միասնականության ու դինամիկության աստիճանը, սփյուռքները բաժանել երկու տեսակի՝ «բյուրեղացած» և «հեղուկ»:[28]

Պատահական չէ, որ սփյուռքների դասակարգման հիմնական չափանիշներից մեկը դրանց ձևավորման մոտիվացիան է կամ նախադրյալը: 90-ականների սկզբին Մ. Բրյունոն առաջարկում էր սփյուռքները դասակարգել ըստ գործունեության գերակշռող ոլորտի, առանձնացնելով երեք դաս՝

1. Ձեռնարկատիրական (Չինաստան, Լիբանան),
2. Կրոնական (Իսրայել, Հունաստան),
3. Քաղաքական (Պաղեստին, Տիբեթ)[29]:

Այս մոտեցումը ծառայում էր աշխատությունում ձևակերպված հիմնական նպատակին՝ սփյուռքներին բնորոշ գործունեության ոլորտների ուսումնասիրությանը, սակայն սփյուռքների բնույթը գնահատելու նպատակ ունեցող ընդհանրական բնորոշման համար այն պիտանի է միայն կամավորությամբ սփռված սփյուռքների դեպքում: Մինչդեռ ստիպողաբար հայրենիքից հեռացած էթնիկ խմբերի (օրինակ, հրեական և հայկական սփյուռքների) դեպքում այն կիրառելի չէ: Ռ. Կոհենի առաջարկած սփյուռքների դասակարգումը հինգ խմբերի, որոնք նա անվանել է սփյուռքի «իդեալական» տարբերակներ, զերծ է նման թերությունից: Այդ դասակարգման համաձայն սփյուռքները լինում են

[28] **Medam A.,** Diaspora, Diasporas. Archétype et typologie, *Revue Européenne des Migrations Internationales,* 1993, **9**, 1, 59-66.
[29] **Bruneau M.,** Diasporas, Montpellier, GIP Reclus. 1995.

1. Զոհի կարգավիճակ ունեցող (հրեական, հայկական, պաղեստինյան, աֆրոամերիկյան),
2. Աշխատանքային (հնդկական),
3. Առևտրային (չինական),
4. Կայսերական (բրիտանական, ֆրանսիական, իսպանական, պորտուգալական),
5. Մշակութային (կարիբյան):[30]

Դժվար է պնդել, որ այս դասակարգումը Մ. Բրյունոյի դասակարգման լրամշակված տարբերակն է, որի հետ ունի որոշ ընդհանրություններ, սակայն Ռ. Կոհենի դասակարգումն ունի այլ բովանդակություն՝ արտացոլում է սփյուռքների բնույթը, այդ թվում և՝ հայրենիքից ստիպողաբար հեռացած էթնիկ խմբերի, որոնք հետագայում համապատասխանել են սփյուռքներին ներկայացվող պահանջներին: Պատկերն ամբողջական լինելու համար արժե նշել, որ վերջին շրջանում կատարված ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է կոհենյան մոդելը լրացնել ևս մեկ՝ «տրանսֆորմացվող» տեսակով[31], որը հետխորհրդային ժամանակաշրջանի գործընթացների հետևանքով ձևավորված սփյուռքների կամ դրանց համայնքների ավելի ճշգրիտ բնութագրման հնարավորություն է տալիս:

Այսպիսով, սփյուռքների և դրանց համայնքների համեմատական ուսումնասիրությունների ժամանակ «համեմատելի» դեպքերի ընտրության նպատակով առավել նպատակահարմար է դասակարգման կոհենյան մոդելի օգտագործումն՝ անհրաժեշտության դեպքում այն լրացնելով ավելի մանրամասն գնահատում ապահովող ինքնության փոփոխականներով:

Սփյուռքների և դրանց համայնքների համեմատական ուսումնասիրությունների առաջարկվող վերը բերված մեթոդաբանության փորձաքննությունը հնարավորություն կտա գնահատել դրա գործնական նշանակությունը:

---

[30] **Cohen R.,** Global Diasporas: An introduction Second edition, Routledge, 2008, pp.16-18.

[31] **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.,** Տրանսֆորմացվող սփյուռքների առանձնահատկությունները՝ հայկական սփյուռքի դեպքը, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2018թ., 1, 5-28:

Առաջարկվող մեթոդաբանության կիրառման արդյունավետության ստուգումը կոնկրետ դեպքի հիման վրա

Առաջարկվող մեթոդաբանության արդյունավետության ստուգման նպատակով կարելի է դիտարկել հայկական սփյուռքի համեմատական վերլուծության վերջին օրինակներից մեկը՝ Վ. Մաթևոսյանի և մի քանի այլ հեղինակների հոդվածը[32], որում վերլուծվում և համեմատվում են հայկական սփյուռքի երկու՝ Ռուսաստանի և Լիբանանի հայկական համայնքների ինստիտուտներն ու ինքնության քաղաքականությունները՝ բացահայտելու համար այն գործոնները, որոնցով կարելի է բացատրել այդ հանրություններում ինստիտուցիոնալ կառուցվածքի և ինքնության պահպանման արդյունքների զգալի տարբերությունները: Հեղինակները Լիբանանի հայ համայնքի հաջողության հիմնական պատճառ են համարում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հեղինակությունն ու գործունեությունը՝ ակտիվ փոխադարձ կապերը դպրոցների, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հետ: Ռուսաստանի հայկական համայնքին առաջարկվում է դասեր քաղել լիբանանյան փորձից՝ Ռուսաստանում գոյություն ունեցող սփյուռքյան ինստիտուտների զարգացման նպատակով: Այդ հոդվածը հայկական սփյուռքի համեմատական ուսումնասիրություններին նվիրված այլ աշխատությունների շարքում արդեն իսկ կարևոր է նրանով, որ, եթե առկա գրականությունը հայկական սփյուռքը դիտարկում է կամ համասեռ էություն ունեցող հանրություն կամ կենտրոնանում է կոնկրետ երկրի կամ դեպքի վրա[33], ապա այն փորձում է բացահայտել հայկական սփյուռքի երկու համայնքների տարբերություններն ու դրանց պատճառները:

Ռուսաստանի և Լիբանանի հայկական համայնքներում իրավիճակ-ների նկարագրության և համեմատության տեսակետից հոդվածի հաստատագրումները միանգամայն հավաստի են: Այդուհանդերձ, կարևոր է պարզել, թե արված եզրակացությունն ինչքանով է հիմնավոր՝ արդյո՞ք արձանագրված տարբերությունների

[32] **Ter-Matevosyan, V., et al.,** նշվ. աշխ.:
[33] Նույն տեղում:

պատճառները ճիշտ են բացահայտված, հնարավո՞ր է այդ առաջարկն իրականացնել Ռուսաստանի կամ որևէ այլ հայկական համայնքում: Եթե այո, ապա արդյո՞ք դա կտա այնպիսի արդյունքներ, որոնք համեմատելի կլինեն Լիբանանի հայ համայնքի արդյունքների հետ: Ստորև փորձ կարվի այդ հարցերի պատասխանները ստանալ այս հոդվածում առաջարկվող մեթոդաբանության հիման վրա:

Այդ նպատակով նախ կազմվել է Աղյուսակ 1-ը՝ վերլուծության համար անհրաժեշտ փոփոխականների հիման վրա:

Ինչպես վերը ներկայացված մեթոդաբանությունն է առաջարկում, ըստ Ռ. Կոհենի դասակարգման որոշվել է երկու համայնքների բնույթը: Այդ համայնքները տարաբնույթ են՝ Ռուսաստանի հայկական համայնքը աշխատանքային է, իսկ Լիբանանի հայկական համայնքը՝ զոհի կարգավիճակ ունեցող: Ըստ Ռ. Կոհենի՝ զոհի կարգավիճակ ունեցող սփյուռքի հիմքում ընկած է ստիպողաբար և պարտադրված սեփական երկիրը լքելու նախապատմությունը, ինչը պայմանավորված է հայրենիքում կեցության համար անտանելի պայմաններով, մասնավորապես՝ զանգվածային կոտորածներով, խոշտանգումներով և այլն: Զոհի կարգավիճակ ունեցող սփյուռքի դեպքեր են հայկականը, հրեականը, աֆրիկյանը: Աշխատանքային սփյուռքի ձևավորումն՝ ի տարբերություն նախորդ տեսակի, իրագործվում է էթնիկ խմբի կամավորության սկզբունքով, որը կենսակերպի առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու մտադրությամբ աշխատանք է որոնում է այլ երկրներում, ինչի արդյունքում աստիճանաբար ձևավորվում է աշխատանքային սփյուռքը: Որպես օրինակ կարող է ծառայել հնդկական սփյուռքը Մեծ Բրիտանիայում, որը ձևավորվել է 1830-ականներից սկսած:[34]

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից ակնհայտ է, որ Ռուսաստանում հայկական համայնքի ձևավորման սկզբնական նախադրյալներն աշխատանքային են եղել (չբացառելով, որ ոչ ազդեցիկ մի հատված կարող է և ունենալ զոհի կարգավիճակ): Դա սկսվել է 19-րդ դարից՝ Ռուսական կայսրության ժամանակաշրջանում և ավելի մեծ թափ է ստացել ԽՍՀՄ տարիներին: Այս համայնքի մի ստվար զանգված էլ Ռուսաստան է տեղափոխվել ԽՍՀՄ փլուզումից

[34] **Cohen R.,** 2008., նշվ. աշխ., էջ 61:

հետո: Թեև այդ հատվածն ավելի ճշգրիտ բնութագրելու դեպքում պետք է համարվի տրանսֆորմացվող[35], սակայն այս հոդվածում դիտարկվող խնդիրների տեսակետից դա որոշիչ նշանակություն չունի:

Լիբանանի հայկական համայնքի ձևավորման հիմնական նախադրյալը Օսմանյան կայսրությունից զանգվածային կոտորածնե-րով, խոշտանգումներով և ջարդերով Արևմտյան Հայաստանից հայության դուրսմղումն է և դրա մի հատվածի տեղափոխումը Լիբանան:

Աղյուսակ 1

Փոփոխականներ	**Ռուսաստան**	**Լիբանան**
Ժողովրդագրական Համայնքի թվաքան.՝ բացար./հարաբեր.	1.182000 / 0,86%[36] Երկրի 7-րդ համայնքը	165000 / 4%[37] Երկրի 2-րդ համայնքը
Ինքնության Համայնքի բնույթը[38]	Աշխատանքային (տրանսֆորմացվող)	Զոհի կարգավիճակի
Ձևավորման ժամանակը	Արևելյան Հայաստանից, 19-րդ դարից, հիմնականում ԽՍՀՄ շրջանում	Արևմտյան Հայաստանից, 19-րդ դարից, հիմնականում 20-րդ դարի սկզբին
Պատկերացումներ հասարակական կյանքի վերաբերյալ	Խորհրդային մտածելակերպով կաղապարված	Արևելյանի և մերձավորարևելյանի համադրություն
Դավանանք՝ 1. համայնքի 2. տիտղոսակիր ազգի	1. Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ, ովքեր 70 տարի եղել են խորհրդային աթեիստական քարոզչութ. ազդեցության ներքո, 2. ուղղափառ քրիստոնյա	1. Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ, ովքեր խորհրդային տարիներին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմերի հավատացյալներ էին, 2. հիմնականում մուսուլման
Ինստիտուցիոնալ փոփոխականներ Հայկական կուսակցություններ	Ոչ	Ավանդական կուսակցություններ՝ տեղափոխված 1921թ. Հայաստանի անկախության կորստից հետո
Մասնակցություն պետական կառավարմանը	Ոչ	Ներկայություն կառավարությունում և խորհրդարանում
Կրոնական կառույց	Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմ	Հայ առաքելական եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն
Կրթական, մշակութ., մարզակ. կառույցներ	Թույլ, փոքրաթիվ	Լիարժեք, կայացած

Այս համայնքը որոշ համալրում է ստացել 1921թ. Հայաստանի Հանրապետության անկախության կորստից հետո, երբ զգալի թվով հայեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունե-ություն ծավալած կուսակցությունների կենտրոնական ղեկավար

[35] **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.,** ն շվ. աշխ.:

մարմինները տեղափոխվեցին Բեյրութ: Լիբանանի հայկական համայնքի այս հատվածի բնույթը ևս կարող է համարվել զոհի կարգավիճակ ունեցող, քանի որ Հայրենիքից դուրս է մղվել այնտեղ հաստատված խորհրդային իշխանությունների բռնության ու ճնշումների ազդեցությամբ:

Ակնհայտ է, որ Ռուսաստանի և Լիբանանի հայկական համայնքների ինքնությունները, համազգային ընդհանուր հատկանիշ-ներից բացի, նաև էական տարբերություններ ունեն, քանի որ ձևավորվել և գործել են տարբեր նախադրյալների ազդեցության ներքո, միանգամայն տարբեր միջավայրերում և պայմաններում: Այդ համայնքների բնույթներն արմատապես տարբերվում են, քանի որ, ըստ Ռ. Կոհենի դասակարգման, դրանք պատկանում են տարբեր դասերի: Ըստ այս հոդվածում առաջարկվող մեթոդաբանության, դա բավարար է համարելու համար, որ այդ համայնքները համեմատելի դեպքեր չեն: Այդուհանդերձ, ստորև սեղմ կներկայացվեն նաև ինստիտուցիոնալ փոփոխականների սկզբունքային տարբերություն-ները, ոչ միայն լրացուցիչ փաստարկներ բերելու համար այն բանի օգտին, որ դրանք համեմատելի դեպքեր չեն, այլ նաև, որ Լիբանանի հայ համայնքի դեպքն այնքան առանձնահատուկ է, որ գործնականում չի կարող օրինակելի լինել որևէ համայնքի համար:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Ռուսաստանի և Լիբանանի հայկական համայնքները դավանանքի հետ կապված խնդիրներ ունեն միայն իրենց բնակության երկրի տիտղոսակիր ժողովրդի հետ կապված, քանի որ ռուսները նույնպես քրիստոնյաներ են, ինչպես հայերը, իսկ Լիբանանի բնիկները՝ մուսուլմաններ: Միաժամանակ, թե Ռուսաստանի, թե Լիբանանի հայերը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են և այստեղ կարծոս թե ինքնության հետ կապված հարցեր չկան: Սակայն կան շատ նրբություններ, որոնք էական տարբերություններ են առաջացնում, մասնավորապես, եկեղեցու դերի ընկալման և համայնքում ազդեցության վրա: Եթե Ռուսաստանի հայ համայնքը դավանաբա-նական առումով կրում է խորհրդային տարիների ծանր ժառանգությունը (ԽՍՀՄ-ում եկեղեցին հալածվում էր և գտնվում էր իշխանությունների խիստ հսկողության ներքո, չէր խրախուսվում

հավատացյալների կապը եկեղեցու հետ և այլն), ապա Լիբանանում գործող հոգևոր կենտրոնը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, վայելում էր բոլոր ազատություններն ու անգամ խորհրդային տարիներից սկսած դուրս է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի փաստացի ազդեցությունից: Ակնհայտ է, որ նման իրավիճակը պատմական զարգացումների եզակի հետևանք է և հնարավոր չէ այն պարզապես կրկնօրինակել:

Տարբերությունը սկզբունքային է նաև քաղաքական ինստիտուտների հարցում: Ռուսաստանի հայ համայնքում չեն գործում հայկական ազգային կուսակցություններ և այդ երկրի պետական կառավարման համակարգում հայերն, ինչպես մյուս ազգերի ներկայացուցիչները, ներգրավվում են սոսկ որպես Ռուսաստանի քաղաքացիներ: Ճիշտ է, Ռուսաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծվել են որոշ հասարակական կազմակերպություններ (Ռուսաստանի հայերի միությունը, Հայերի համաշխարհային կոնգրեսը և այլն), որոնք այլ կանոնադրական նպատակների շարքում հռչակել են նաև ազգային համախմբումն ու ինքնության պահպանումը, սակայն այդ տեսակետից դրանց գործունեության արդյունավետությունը բարձր չէ ոչ միայն Ռուսաստանի հսկա տարածքի և այնտեղ հայերի սփռվածության պատճառով, այլև, որ խորհրդային տարիներին ազգային ինքնության պահպանությամբ զբաղվող կամ ընդհանրապես ինքնուրույն գործող կազմակերպություններ չկային: Ըստ Ա. Բրաունի, «Մինչև 1980-ականների կեսերը Խորհրդային Միությունում անթույլատրելի էր որևէ կազմակերպության ստեղծումն առանց պետության թույլտվության ու վերահսկողության, նույնիսկ եթե այդ կազմակերպությունը քաղաքական չէր»:[36] Ավելին, ազգային ինքնության խնդիրներով զբաղվող կազմակերպություններ չէին կարող լինել, քանի որ ԽՍՀՄ-ում պետական գաղափարախոսությունը նպատակ էր դրել վերացնել ազգերի միջև տարբերությունները (հետևաբար և ազգային ինքնությունը) ու ձևավորել սովետական մարդկանցից բաղկացած սովետական ժողովուրդ: Հետևաբար, չկար և ազգային ինքնության պահպանման և զարգացման կառույցների

[36] **Brown A.,** The Gorbachev Factor, Oxford: Oxford University Press, 1996, pp. 16-17.

ձևավորման ու արդյունա-վետ գործունեության փորձ: Իսկ հասարակական տրանսֆորմացիաների (տվյալ դեպքում՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի) ժամանակ հասարակական գիտակցության փոփոխությունը ամենաբարդ բաղադրիչն է:[37] Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, Հայաստանում մինչ խորհրդայնացվելը գործած երեք հիմնական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության, Ռամկավար ազատական կուսակցության և Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական մարմիններն ու ղեկավար կազմերը խորհրդային կարգերի հաստատումից հետո հետապնդումների ու բռնությունների պատճառով տեղափոխվեցին Լիբանան: Ավելին, այդ կառույցները ոչ միայն ներգրավվեցին Լիբանանի քաղաքական համակարգում և ներկայացուցիչներ ունեն ինչպես խորհրդարանում, այնպես էլ կառավարությունում, այլև, որպես փորձառու և գործող կառույցներ ունեցող կազմակերպություններ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հետ համագործակցությամբ, մեծ ազդեցություն ունեցան կրթական, մշակութային բարեգործական և այլ կազմակերպություն-ների ձևավորման ու զարգացման վրա: Եթե ավելացվի նաև Ռուսաստանի հայկական համայնքում և Լիբանանի հայկական համայնքում ձևավորված պատկերացումների արմատական տարբերությունը հասարակական կյանքի կազմակերպման վերաբեր-յալ, ապա ակնհայտ կդառնա, որ այդ համայնքների համեմատական վերլուծությունն՝ ինքնության պահպանման և ինստիտուտների գործունեության արդյունավետության տեսակետից, միանգամայն անտեղի է:

Այսպիսով, առաջարկվող մեթոդաբանության կիրառումը հայկական սփյուռքի Ռուսաստանի ու Լիբանանի համայնքների համեմատական ուսումնասիրության համար ցույց է տալիս, որ այդ համայնքները, թեև ունեն ազգային ինքնության ոչ քիչ ընդհանուր տարրեր, սակայն որպես սփյուռք՝ բնույթի և առանցքային պատմական իրողությունների տարբերությունների պատճառով, բացարձակապես համեմատելի չեն: Հետևաբար, այդ համայնքները չեն կարող լինել համեմատական վերլուծության դեպքեր և դրանց գործունեության

[37] **Թորոսյան Տ.,** նշվ. աշխ., էջ 179-185:

արդյունքների տարբերություններից բխող եզրակացությունները, որոնք բերված են դիտարկված հոդվածում,[38] չեն կարող լինել հիմնավոր: Հայկական սփյուռքի համայնքների համեմատական վերլուծության նպատակով դեպքերի ընտրության համար կարելի է օգտագործել այդ համայնքների դասակարգումն ըստ բնույթի[39]՝ համեմատելով միայն խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված համայնքները միմյանց հետ:

Մինչդեռ սփյուռքների ու դրանց համայնքների համեմատական վերլուծության համար առաջարկվող մեթոդաբանության կիրառումն այդ համայնքների դեպքում ցույց է տալիս, որ այդ մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ոչ միայն արագորեն բացահայտել տարբեր դեպքերի համեմատելիությունը կամ անհամեմատելիությունն, այլև խուսափել ոչ ճիշտ եզրահանգումներից ու առաջարկություններից: Միաժամանակ, այդ մեթոդաբանության կիրառումը հնարավորություն կտա ապահովել համեմատական ուսումնասիրության արժանահավատ եզրակացություններ սփյուռքների զարգացման ռազմավարությունների ընտրության արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Եզրակացություն

Սփյուռքների դասակարգման մոդելների, դրանց համար հիմք ծառայող փոփոխականների, համեմատական վերլուծության ժամանակ օգտագործվող մոտեցումների ու դրանց կիրառման կոնկրետ դեպքերի, մասնավորապես, հայկական սփյուռքի ու դրա համայնքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ

1. Սփյուռքների և դրանց համայնքների համեմատական վերլուծության համար հիմք ծառայող մոտեցումներն ու սկզբունքները կարիք ունեն լրամշակման և կոնցեպտուալացման՝ ուսումնասիրությունների արդյունավետ մեթոդաբա-

[38] **Ter-Matevosyan, V., et al**., նշվ. աշխ.:
[39] **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.,** նշվ. աշխ.:

նության կիրառման և հավաստի արդյունքներ ստանալու նպատակով,

2. Այս հոդվածում առաջարկվում է սփյուռքների և դրանց համայնքների համեմատական վերլուծության մեթոդաբանություն և դրա իրականացման ալգորիթմ: Այն հիմնվում է համեմատական ուսումնասիրությունների տեսությունում հայտնի մոտեցման վրա, որը արդյունքների հավաստիություն ապահովելու տեսակետից կարևոր պայման է համարում համեմատվող դեպքերի «համեմատելի» լինելը: Միաժամանակ, այս հոդվածում առաջարկվում է սփյուռքների ուսումնասիրությունների ժամանակ օգտագործվող փոփոխականները բաժանել երկու խմբի՝ ինքնության և ինստիտուցիոնալ, քանի որ դրանք օգտագործվում են առաջարկվող մեթոդաբանության իրացման տարբեր փուլերում,
3. Սփյուռքների համեմատական վերլուծության նպատակով առաջարկվող համեմատական վերլուծության մեթոդաբանության իրականացման ալգորիթմը բաղկացած է չորս հիմնական փուլերից՝ համեմատվող սփյուռքների (համայնքների) ընտրություն՝ ըստ դրանց բնույթի (տարաբնույթ կարող են լինել ինչպես սփյուռքներն, այնպես էլ նույն սփյուռքի տարբեր համայնքները), անհրաժեշտ և բավարար թվով ինստիտուցիոնալ փոփոխականների համախմբի ընտրություն և դրանց բազային տվյալների ձևավորում, այդ տվյալների վերլուծության միջոցով դեպքերի համեմատում, եզրակացություններ,
4. Համեմատվող դեպքերի ճիշտ ընտրությունը վերը ձևակերպված նպատակի ապահովման կարևոր նախապայման է, որի իրականացման համար պահանջվում է ֆորմալիզացնել այդ ընտրության գործընթացը, սահմանել այն չափանիշները, որոնց բավարարման դեպքում կապահովվի համեմատելի դեպքերի ընտրությունը, դրանով իսկ՝ համեմատական վերլուծության արդյունքների ու եզրակացությունների հավաստիությունը: Այդ նպատակով առաջարկվում է ինքնության փոփոխականների միջոցով պարզել համեմատելի

դեպքերի բնույթը: Հաճախ այդ նպատակի իրագործման համար բավարար է որոշել սփյուռքների կամ դրանց համայնքների բնույթն՝ ըստ Ռ. Կոհենի դասակարգման,

5. Սփյուռքների համեմատական ուսումնասիրության ժամանակ համեմատելի դեպքերի համար է միայն ինստիտուցիոնալ փոփոխականների բազային տվյալների վերլուծությունն ապահովում հավաստի եզրակացություններ ու հետևություններ,
6. Հայկական սփյուռքի երկու՝ Ռուսաստանի և Լիբանանի համայնքների ուսումնասիրությունն առաջարկվող մեթոդաբանությամբ ցույց է տալիս, որ անգամ նույն էթնիկ կազմն ունեցող համայնքների բնույթները կարող են տարբերվել, ինչը նման համայնքների համեմատական վերլուծությունը՝ դրանց գործունեությունների գնահատման և համեմատման նպատակով, դարձնում է անարդյունավետ և հանգեցնում է ոչ ճիշտ եզրակացությունների:

The Modeling Problems of Comparative Analysis of Diasporas

TIGRAN TOROSYAN
Brusov State University of Languages and Social Sciences
Center of Perspective Researches and Initiatives

ARAX VARDANYAN
Center of Perspective Researches and Initiatives

The article discusses the problems of the effectiveness of a comparative analysis method used for diaspora studies. This is conditioned by the fact that diasporas, depending on their nature, can be either comparable or non comparable. The article provides a methodology for studying diasporas and their communities as well as its implementation algorithm. It is based on the approach that one of the key factors of comparative analysis is whether the cases compared are comparable or not. To this end, it is necessary to find out the nature of diasporas or their communities. This can be achieved on the basis of Cohen's model of classification of diasporas or its revised version in case the diasporas and communities of post-Soviet space are also under study. To ensure the effectiveness of the analysis of comparable diasporas, the article proposes to classify the variables defining diasporas into two groups: identity variables and institutional variables. Identity variables can be used in case there is a need for more detailed assessment of the nature of diasporas. The comparative analysis of diasporas or communities with the same nature should be based on institutional variables. The article examines the cases of the Armenian community in Russia and Lebanon to test the proposed methodology. It argues that these communities have different nature and thus their comparative analysis for the purpose of disclosing the prerequisites for the preservation of identity and effective functioning of institutions is senseless.